

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈՒՍԴԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊԶԲ-22/32 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Դահլիճի կահույքի հավաքածու Դահլիճի սեղաններ Սեղանը պետք է պատրաստվի շպոնապատ, ոչ պակաս 18մմ հաստությամբ ՄԴՖ-ի և հաճարի փայտի համադրությամբ՝ լաքապատված (ընդ որում, սեղանի դեկորատիվ մասերը և սեղանի եզրերը պետք է պատված լինեն հաճարի փայտից՝ ըստ ներկայացված էսքիզի): Յուրաքանչյուր շարքում պետք է տեղադրվի 2-ական սեղան, շարքերի ընդհանուր թիվը 7 (7x2=14 հատ սեղան), շարքերի կողային հատվածում պետք է տեղադրվի ընդհանուրը 5 հատ սեղան, որոնք պետք է համապատասխանեն դահլիճում տեղադրվող այլ սեղանների բնութագրերին, բացառությամբ մեկ հատ սեղանի չափերի (երկարությունը՝ 2500 մմ, բարձրությունը՝ 750 մմ, լայնությունը՝ 600 մմ): Սեղանների դասավորվածությունն ու տեսքը պետք է համապատասխանեն ներկայացված էսքիզին, իսկ մատակարարումն ու տեղադրումը պետք է իրականացվի Կատարողի միջոցներով և վերջինիս հաշվին: Անհրաժեշտության դեպքում Կատարողը պետք է ապահովի սեղանների վրա Պատվիրատուի կողմից մատնանշված տեղերում անցքերի բացումը համապատասխան գործիքներով: Ընդհանուր թվով 18 սեղանների չափերը՝ երկարությունը՝ 1700 մմ Բարձրությունը՝ 750 մմ Լայնությունը՝ 600 մմ Գույնը և տեսքը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ղեկավարի սեղան Սեղանը պետք է պատրաստվի շպոնապատ, ոչ պակաս 18մմ հաստությամբ ՄԴՖ-ի և հաճարի փայտի համադրությամբ՝ լաքապատված (ընդ որում, սեղանի դեկորատիվ մասերը և սեղանի եզրերը պետք է պատված լինեն հաճարի փայտից՝ ըստ ներկայացված էսքիզի): Սեղանի աշխատանքային հատվածը 10 սմ-ով ավելի ցածր է քան սեղանի վերին հատվածի կողային և դիմային դեկորատիվ հատվածները: Աջ և ձախ կողմերում առկա են մեկական</p>

դարակներ և մեկ պահոց: Դարակների ուղղորդիչները պարտադիր բարդ-վակուումային տեսակի: Սեղանի տեսքը պետք է համապատասխանի ներկայացված էսքիզին, իսկ մատակարարումն ու տեղադրումը պետք է իրականացվի Կատարողի միջոցներով և վերջինիս հաշվին: Անհրաժեշտության դեպքում Կատարողը պետք է ապահովի սեղանի վրա Պատվիրատուի կողմից մատնանշված տեղերում անցքերի բացումը համապատասխան գործիքներով: Սեղանի դիմային հատվածի միջնամասում պետք է լինի Մասիս համայնքի լոգոն՝ փորագրված փայտից, սեղանի գույնին համապատասխանող: Ղեկավարի սեղանի չափերը՝ Երկարությունը՝ 2500 մմ Բարձրությունը՝ 800 մմ Լայնությունը՝ 700 մմ Սեղանի գույնը և տեսքը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ամբիոն Ամբիոնը պետք է պատրաստվի շպոնապատ, ոչ պակաս 18մմ հաստությամբ ՄԴՖ-ի և հաճարի փայտի համադրությամբ՝ լաքապատված (ընդ որում, ամբիոնի դեկորատիվ մասերը և եզրերը պետք է պատված լինեն հաճարի փայտից՝ ըստ ներկայացված էսքիզի): Մատակարարումն ու տեղադրումը պետք է իրականացվի Կատարողի միջոցներով և վերջինիս հաշվին: Անհրաժեշտության դեպքում Կատարողը պետք է ապահովի ամբիոնի վրա Պատվիրատուի կողմից մատնանշված տեղերում անցքերի բացումը համապատասխան գործիքներով: Ամբիոնի դիմային հատվածի միջնամասում պետք է լինի Մասիս համայնքի լոգոն՝ փորագրված փայտից, ամբիոնի գույնին համապատասխանող: Ամբիոնի չափերը բարձրությունը՝ 110-ից 120 սմ հարթակը՝ 50-ից 60սմ Ամբիոնի գույնը և տեսքը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

სააუქციო ცენტრი საქართველო в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 0000-100000000-22/32 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	